

Գ Ա Յ Մ Ա Ն Բ

Էրիզան 10 օրը անգամ մը կը հրատարակուի :
Տարեկան գինն է 1 1/2 մէծիտ Մէկ Թերթը 40 փարայ .
Բաժանորդագրութիւնը տարւոյն սկիզբէն է .
Դուրս երթալիքներուն ճամբու ծախքը անուղին վրայ է :
Անվճար նամակը կը մերժուի .
Հանդիսիս վերաբերեալ նա յակ կամ գրութիւն, պէտք է ուղղել առ իմ քաղիք :



ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

Գ. Պօլիս, Արամեան տպարան,
Ատաբազար, Պ. Սալահորեան,
Սամոն Օհանէս Եղիսերեան,
Տրապիզոն, Հ. Գ. Սարրեան,
Էրիզա, Պ. Սիմօն Մ. Խաչատուրեան .
Նիկովիզա, Ռուբէն Գ. Գապասապեան,
Զմիւռնիա, Յ. Տէտէեան .
Կարին, Կ Պատ. Զաքարեան .
Վան, Պ. Գրիգոր Իսահան,
Հալէպ, Նիկ. Տ. Մարգարեան .

Է Ր Ի Զ Ա

Հ Ա Ն Դ Է Ս Տ Ա Ս Ն Օ Ր Ե Ա Յ

Ա. Տարի 1868

Եթէ կ'ուզես գիտնալ թէ աշխարհիս ազգաց մեքեն հոն է ամենեկն լուսաւորեալն ու հարուստը . հարցուր թէ հր ազգն աւելի ընթերցասէր է կամ հր ազգն աւելի բուռք կը գործածէ :

Թիւ 6 Մարտ . 11

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային . — Փարիզու Նօրը-Տամ Եկեղեցին . — Ատաբազարէն նամակ մը . — Հերթական նամակ մը . — Նոր հրատարակութիւնք :

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Կէչէն ճիւմա կիւնիւ սաամ եւտի պուչուք րաւտէլէրինտէ մէծիսի Ումումի Փաթրիքիսանէ տէրունիւնտէ Թէճէմմիւ իտիւպ . վէ 51 ազատան զիւստէ երեսփոխան էֆէնտիլէր . Եանի 71 հիսապընս Թէվֆիզան էքսէրիէթ պուլունուպ , Բարունակ պէյրիասէթի իլէ մէճիս աշըլարագ . էվվէլ էմիրտէ մուախիսարէն Թէճէմմիւ իթմիշ օլան մէճիսին առձանագրութիւնու օգունմուշ վէ պատէհու Սահնաճադրութիւնտան սօնրա . Մարտ 6 Թարիս իլէ Պապը Ալի ճանիպինտէն , Փաթրիքիսանէյէ վիրուտ իտէն պիր զըթա պուլրուլտուի Ալի ալէնէն օգունմ-

տուրուլմուշ տըր . վէ ամմէնին մալիւմիւ օլտուղու իչիւն պիզ տախի պու կիւն միւսարրահանէն տէրճինի զիյրտէ ճալիզ կէօրմէմիշիզ տիր :

Պու մէճիստէ վուզու պուլան տիզգամի ամմէնին ճէլպինէ շայեան պիրիիննի Թէզէքքիւրամ շու օլմուշ տուր քի . Եանի Սահնաճադրութիւն Եազընլարտա պասըլպ . պիրէր նիւսիւէ երեսփոխան էֆէնտիլէրէ կէօնտէրիլէճէք տիր , վէ 15 կիւն սօնրա Թէքքարէն մախսուս Սահնաճադրութիւն իչիւն Թէճէմմիւ իտէճէք օլան մէճիստէ ինթիսապ իտիլէճէք պիր Գօմիսիօնա իհալէ իտիլէճէք տիր տէյու զարար վէրիլիպ , սաամ օն պոչուքտա մէճիս տաղըլմըշ տըր :

Պու զարարը ընդհանուր ժողով վէրիպ վէ պիզլէր տախի իշիթտիլիմիզտէ , Եանի օլ կիւնիւ հիչ պիր իշ կէօրիւլմէմիշ տէսէք՝ զանն իտէրիզ երեսփոխան էֆէնտիլէրէ զարշը պիր հազարէթ սալըլամագ . չիւքի , պու պապտէ պիզիմ զիւստէ հազգըմըզ օլտուղու աշիքեար տըր . շէյլէքի 15 կիւն մուզատտէմ Սահնաճադրութիւն Գափուտան կէլտիկինտէ .

Փանոսեան էֆէնտի, Մանգումեի էֆէնտի վասը-
ժասը իլէ քէլ էվլէլ իսթիքնամէ իլլէյուպ. Մաննա-
նադուրիւն պասըլըպ տաղլլմասընը թալիպ իլլէ-
տի, լաքին պիլմէլիզ նէ սէպէպէ մէպնի երեսփո-
խան էֆէնտիլէր մէքքիւր Վարագայը օգուլուպ
տա մինտէր ալթը իթտիլէր. վէ շիմտի տախի գալ-
զըպ թէքրարէն Փանոսեան սէօզիլնէ ըիայէթ իտիւպ
հէմ էֆքեար պուլունտուլար:

Կէրչի հէր նէ գատար Եւրոբատա՝ պէօյիւք Տիպ-
շունաքլար տախի Էքսէրի ղազէթանըլարըն եագտըք-
լարը քէլամլարընը միւնսալա իթմէքտէ իսէլէրտէ.
լաքին պիլգիմ ումումի մէնլիս ազալարը օնլարտան
տահա զիյատէ տիրայէթտէ Տիպշունաքլար պուլուն-
տուլարը իշիւն տիր քի՝ ասլա ղազէթանըլարըն
սէօզլէրինէ, վէ հազըլ օլտուլարը թագտիրտէ տա-
խի էհէմմիյէթ կէօստէրմէմէքտէ տիրլէր:

ՆՕԹՐ-ՏԱՄ ՏՐ ՓԱՐԻ

ՓԱՐԻԶՈՒ ՆՕԹՐ-ՏԱՄ ԵԿԵՂԵՑԻՆ

ՅԱՌԱՋԱՐԱՆ

ԹԱՐԳՄԱՆԶԻՆ

Եթէ անգամ մը աչքերնիւ Հայ գրականական շա-
լին վրայ դարձնելու ըլլամք, չեմք սխալիւ ըսելու
թէ՝ կարողալու արժանի կրօնական գրութիւններէ
՝ գատ՝ և ոչ ուրիշ բան մը պիտի կարենամք տեսնել:
Ինչպէս որ մենք, նոյնպէս ալ քաջ ծանօթ ենք որ,
եքիկայ լուսաւոր դարուս մէջ ապրող ողջախոհ մար-
իկք ալ, անշուշտ համոզուած են թէ՝ կրօնական
լուծիւնները մարդոյ մի միայն ղէպ ի երկնի տը-
րայական փառաց տաճարը աղղըլու ճշմարիտ ա-
ւելորդներն են:

Սակայն այս առաջնորդութիւնը երկու մասի բաժ-
ուած ըլլալը նշմարելովնք, չեմք մոռնար ըսելու
թէ՝ մարդս որչափ որ երկնային՝ այնչափ ալ երկրա-
ին է. ուրեմն ըսել է որ, ոչ մի միայն կրօնքով ղէպ ի
որքայութիւն, այլ բնականաբար ալ կարևոր պէտք
ենի սակաւիկ մի ղէպ ի քաղաքականութեան շա-
լին:

Ղին նետնելու, հին և նոր պատմութեանց էջերը
թղթատելու, անցեալն ու ներկան իրարու հետ բազ-
դատելով գաղափարներ ծաղկեցնելու, և ամէն բա-
նի մէջ եռանդագին ըլլալու:

Բնութեան այն սքանչելի և ճարտար ձեռքը՝ երբ
մարդկական խմորին կենդանի շունչ մը սփռեց. չէ
թէ մի միայն կրօնքի մը ծառայելու համար էր. սա-
կայն միջին դարու տաժան ձեռքը՝ մարդկային գե-
ղեցիկ սեռի կենդանի շունչը թոռնաւորելով, բռնա-
բարական զինու շառաչմամբ, շատերը ղէպ ի կո-
րուստ, շատերը ղէպ ի կաղախան, և շատերն ալ
ղէպ ի գերեզմանական տարտարոսի անդունդները
թաւազլոր աքսորեց. և անոյ այսպիսի բռնաբարու-
թեամբ մարդկային հոգւոյն կենդանի աչքերը ան-
գամ շլացուց... և վերջապէս ազատ ժողովրդեան մը
պարանոցը իբր գերի ամուր շղթաներ լարելով՝ իրա-
ւանց սահմանէն դուրս, դժոխական ճիրաններու ա-
ռաջ դառնապէս կաշկանդելու յանդգնեցաւ:

Սե անոյ այսօր ուրախ սրտիւ փառք կը կարգամք
հրապարակական Հանդիսի ազատ՝ և խոհեմազարդ
գրչին, որ ճիշդ թական խարոյկները կտոր կտոր բը-
զըտեցաւ, ու միջնադարեան ձեռքերու մէջ ոլոր ոլոր
դարձած՝ մեքենայական ժանտախտի շղթաներու օ-
ղակները մերկապարան խայտառակելով, շլամտին
աչքը բացաւ, ու գերի ժողովրդեան մը վզին սանձը
ճղակտոր բաժնեց:

Ինչպէս որ շատերը, նոյնպէս ալ Վիկթօր-Հիլիօ
համբաւաւոր բանաստեղծը, իւր հռչակաւոր և ըս-
քանչելի գրչին գոյլելի ազատութիւնը միջին դարու
սոսկալի և երկասլորի սուրերու իբր վահան ղէմ բռնե-
լով, այսպիսի անեղազոյ դաշտի մը մէջ ճշմարտու-
թեան դրօշը անարատ պահելու դիտմամբ արիաբար
կռուեցաւ, և մարդկային սրտի մէջ արմատացեալ դա-
րաւոր փտութիւններու բարձմանը համար, իւր ա-
զատախօս գրիչը ղէպ ի հրապարակ մղելու երկէք
չղանդադեցաւ, ու մարդկօգուտ վիպական գրու-
թեամբ, իւր գրչի յարգը բոլոր աշխարհի առաջ
զաքնեայ տերներու ու ծաղկահիւս պոսակներով
զարգարուեցաւ:

Սրդեօք որպիսի փափաք մը կ'զգայ մարդս, երբ՝
այսօրէս իւր անունը գրական ասպարիզի մէջ՝ ան-
մահացնող գրչէ մը դուրս թափած, եզական գրու-
թեանց շարքերը աչքին առաջ ունենալու ըլլայ:

Համառատորին Վիկթոր-Հիլի 083ի այսպիսի եզակիան գրութիւնները առանց վարանելու վրնամբել թէ բոլոր լուսաւորեալ ազգաց լեզուաւ թարգմանուած ու միջոնաւոր օրինակներ ալ ծախուած է, բայց մեր հինօրեայ ազգին մէջ գէթ մէկ քանի յիտքրիկ գրութիւններէ, ուրիշ երեւելի գրութիւնները դեռ ևս թարգմանութիւն չը տեսնուի ի զատ, շատերէ ալ անծանօթ մնացած է:

Փաղղիական ազգը որ իւր գրական հանդէսովը, օտար կամ զրացի ազգաց գրականութեանցը վրայ ծիրանագոյն դրօշ մը կը բարձրացունէ, անուրանալի ճշմարտութեամբ կրնամբել թէ Վիկթոր-Հիլի 083ի սքանչելի գաղափարին և ազատախօս գրչին կոթնած կը պարծի. բայց Հայը որ այս շէրդութիւնը չունի, գոնէ ըստ բաւականի անոր եզակիան գրութեանց վսեմ թարգմանութիւնն իւր գրականական Հանդիսի մէջ թով տակելով վայրկեան մը անոր լոյսովը թող ցոլայ:

Մեր որ այժմ կը փափաքիմք այսպիսի եզակիան անձի մը հեղինակութիւններէն մին, այսինքն՝ ՆՕԹ-ՏԱՄ ՏԸ ՓԱՐԻ ըստած եզակիան գրքի տողերն ի Հայկ բարբառ ածելով, մարդկային պարտաւորութիւններէս գոնէ մէկը լրացնելու, և միջնադարեան ձեռքերէ հիւսուած ժանտախտական շղթաները Հայ գրականական ցանկին մէջ ալ մերկապարան խայտառակելու... սակայն՝ Հայ գրական ասպարէզը անբերրի ըլլալը քաջ նշմարելով այս տեղ վայրկեան մը կանկ առնելու կը պարտաւորիմք, ու անշարժութեան մէջ անհամար մտածմանց խորը կը խորասուզուիմք:

Արդ՝ Հայ գրականութիւնը արդէն դաժանելի ըլլալը գիտնալով, և բազմաթիւ անձանց երեւելի փաստերով որչափ որ համոզուած ալ էինք. սակայն այս անբերրի գրականութեան մէջ փորձ մը ընել ուզելով էրիզա անուն Տասնօրեայ Հանդիսի վեցերորդ թիւն ալ հրապարակ հանելու բաղղին արժանացանք. բայց Կինչ օգուտ Ազգայնոց շատերը փոխանակ մեզ քաջալէիւն տեղ. վնասական խօսքերով մեր գրչի առաջ յուսահատութեան անդունդ մը կը բանան ըսելով թէ՝ «էրիզան ալ կանուխ ժամուան մը մէջ, Ծաղկի պէս իւր դամբանականը անձամբ կարգալու չուշանար» յիշուի այս վնասական խօսքը արտասանող շեղուն, որչափ որ մեր գրչի մեջանը թունաւորելով զմեզ թշնամանել կուզեր. և իրօք իւր արտաշնչին բա-

ռին աչիւր սիրտը Հայգրականութեան զարգացման արարատական մեքենայ մը ըլլալը բացարձակ կիմացըներ, սակայն այսպիսի ապիրատ լեզուի մը դառնաշունչ բամին, չէ թէ շատերու, գէթ մէկ քանի Հայկական ողջամիտ սրտերու դառն գալով անյապաղ սկսան զմեզ քաջալէր խրախոյսներ կարգալով էրիզա մնալ Հայկական անբերրի դաշտին վրայ ծաղկեցնել:

Շլամիտ ու միջնադարեան սևասիրտ Հայը քնչ կը յուսայ արդեօք, յետադիմութեան ժանտախտաւ կառքին վրայ նստուն խաւարի անիւները աներևութանալու ատեն. փոխանակ իւր Հայկ-բարբառ լեզուէն արմատախիլ ընելու... քնչու չսեր թէ՝ եղբարք, քանաք չէ թէ՝ ուրիշ բանով ալ գէթ մի միայն սակաւիկ մի քաջալերական ձեռնտուութեամբ Հայ գրականութիւնը մշակելով այս անբերրի դաշտին վրայ քանի մը էրիզաներ ևս բազմացնել, ու օտար և նորածին անգերու առաջ գոնէ գրականական Հանդիսի հարստութեամբ մը պարծիլ... Ազգի մը հորիզոնի վրայ երբ՝ քանի մը Հանդիսական թերթերու նսեմական շառաւիղները կը ցոլայ, պէտք է գիտնալ որ նոյն Ազգը՝ յառաջադիմական ասպարիզին վրայ ծլած ու ծաղկած է:

Արդ՝ Հայ եղբայր երկարաբանական փաստերէ զերծ մնալու գիտմամբ, կրկին բուն մեր նպատակին վրայ սչքս շնորժելու չեմ վարանիր. Հայ գրականական յառաջադիմութեանը և մեր այս եզակիան գրքի թարգմանական աշխատութիւնը փառապաշակ լինելը, Հայկական ծոցի մէջ գէթ ազատ օդ մը շնորդ տակաւաթիւ Հայերու, բարենպատակ քրտին դա բաղբիս լեզուին յանձնելով, այսօր արժան կը համարիմք հրապարակաւ խօստանալ որ եթէ Հայք քաջալերական ձեռնառութեամբ մեր բաժանորդագրական ցանկի բազմապատկութիւնը սիրով բարեւել կը բարեհաճին երկտողիկ նամակաւ մը իրենց Ազգասիրական անունը մեզ իմացնելու. մէք ևս սիրով կը պատրաստուինք ժամ առաջ պարտաւորութիւնն իսկատարելու ջանասէր ըլլալ. առանց ասոր, այսպիսի ծանր աշխատութիւններ անկարելի կերևի մէջ յառաջացնել. վասն զի... և այլն:

Հայեր՝ անուրանալի ճշմարտութիւն մի է Հայ գրականական ցանկին այսպիսի փզական գրութիւններէ բոլորովին զուրկ լինելը. և դեռ միջին դարու

մէջ տեղի ունեցած անհամար աղետալի դեպքերու նկարագրական պատմութիւնները չը զիտնալը. ահաւասիկ կրկին հրապարակաւ կը յիշեմք այս եղական զրքի թարգմանութիւնը մաս առ մաս հրատարակել էրիզախ միջոցաւ և տարի զտուս նուիրել ձրիապէս ամէն մէկ բաժանորդաց, թղթակազմեալ մաքուր օրինակները :

Հայեր անվրիպելի արդարութիւն մըն է սայիշեալ մէկ քանի տողերը՝ զորս արժան զատելով կը յիշեմք որ, Եւրոպայի մէջ երբ մէկը այսպիսի բարենպատակ ձեռնարկութիւն մը ընելու էնէ, իսկոյն Հասարակութեան կանխական ձեռնտութեամբն է որ ժամ առաջ իւր նպատակը փառօք պատկերու կ'արժանանայ. ահաւասիկ մեզ ևս այսպիսի ճշմարտութեան մը կոթնած, այսօր համբաւաւորին ՎԻՔԻՍՏ ԶԻԿՍՐ Բանաստեղծի զրչէ դուրս ցայտած ՆՈԹՐ-ՏԱՄ ՏԸ ՓԱՐԻ անուն. կրող եղական զրքի յառաջաբանը մերս ընթերցասէր ազգայնոց յարգական ուշադրութեանը յանձնելով մէյմէկ բաժանորդագրական ձեռնտութիւնին կը խնդրեմք :

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ՀԵՂԻՆԱԿԻՆ

Վրքի նեղինակը, քանի մը տարիէ ի վեր տեսնելով, կամ (լու և է ըսել) հետաքրքրութեամբ Փարիզի Նօթր-Ծամ հոյակապ եկեղեցւոյն աշխարհչակ կամարին տակ շրջած ատեն, անոր միտարաշակաց անկիւններու մեկուն մէջ, սա հետեալ յունական տառերու ձեռագիրները պարսպի մը վրայ նկարուած տեսաւ, ու յանկարծ վայրկենական քայլախոյսի մը շարժման միտում ընելով, իբր թէ հրեշի մը անկենդան դիակի մը հանդիպած, սարսափմամբ կանկ առնելու փորձ մը ըրաւ :

ΑΝΑΓΚΗ

Այս Յունական գլխագիրները որ բաւական խորութեամբ քարի մը մէջ գետեղուած ու հնութենէ բոլորովին սևացած էին. չեմ գիտեր թէ ինչպիսի յատկական նշաններու պարունակութիւններ կը բովանդակէին, այս գլխագիրներու զրոշմական կազմ

մութիւնն ու դիրքին յօրինուածութիւնը ցնորական տեսարան մը կը ձևացներ մարդու աչքին, այնպէս որ յայտնի կիմացուէր թէ, այս Յունական զրբուէն հեղինակը միջին դարու սոսկումներէ վիատեալ ձեռք մը ըլլալու էր. մանաւանդ անօր իմաստը ողորմ վըշտագին և աղետալի օրհասական ճակատագիր մը իմացնելով, Հեղինակին կենդանի եռանդն ու զգայական ոգոյն ուշադրութիւնը իրեն կը գրաւէր, վայրկեան մը չէր ուզեր հեռանալ այս տեսարանէն. ինքնիրեն կը հարցունէր, և կուգեր իմանալ թէ արդօք որպիսի վատասիրտ և որպիսի անկենդան կեանք մը անցուցած պիտի ըլլայ այս աշխարհի մէջ այն անձը. երբ առանց այս դժուարին զրոշմական խորանն ու այն հին օրեայ հոյաշէն եկեղեցւոյն թշուառ ճակատագրին պատմութիւնը զիտնալու, ուզէ բաժնուիլ այս անցաւոր և անհուն տիեզերքէն :

Այն ատենէ ի վեր այսպիսի հոյակապ կամարին պարիսպները կեղեքելով, դեղագունելով (չեմ գիտեր և այլ ինչ) բոլորովին նկարագրիները մարդկային տեսութենէ աներևութացուցեր էին. և ահա ասօր համար է որ երկու հարկու տարիներէ ի վեր միջնադարեան հոյաշէն եկեղեցիք գեղեցկատեսիլ նորոգութեան ամէն կողմանէ, ինչպէս որ ներքին, նոյնպէս ալ արտաքին ծայրաբաղուցութիւններ եղան. քահանայն այս սոսկական տառերը անյայտ ընելու դիտմամբ կը զունաւորէ. ճարտարապետը բնաջինջ խորտակելու համար կը կեղեքէ. սակայն հաստարակութիւնը հետաքրքրութեամբ զանոնք կրկին եղծելու և հանրութեան ներկայացնելու անմէն ջանք և միջոց ի գործ կը դնէ :

Այսօր զրքիս Հեղինակը որ սոսկական յիշատակութեամբ իւր զրչի կարևորութիւնը հանրութեան օգտին զոհելու դիտմամբ տողական գիծերը կը բազմապատկէ, ուրիշ նպատակի մը համար չէ. այլ ՆՈԹՐ-ՏԱՄի աղօտ և մթին չաշտարտի վրայ նկարուած գաղտնի բառերուն անձանթ ճակատագրի մը տխրալից բովանդակութիւնը : Այս սոսկական զրբխագրերը պատին վրայ նկարող միջնադարեան ձեռքը բոլորովին աշխարհի վրայէ անյայտ ըլլալով փորձի զարձած է. իսկ այժմ որ բազմաթիւ դարեր այս տոհմական միջավայրէն սանք է և բառն ալ իւր շըրջանին հետ եկեղեցւոյն պարսպացը վրայէն եղծուած է. և կարելի է որ նոյն իսկ եկեղեցին ալ, իսկոյն

երկրիս վրայէն քիչ ժամանակի մէջ կանհետանայ :

Ահաւասիկ այս Յունական գլխազրեբուն վրայ այս գիրքը յօրինուած է) :

Մարտ 1834

ՎԻՔԹՕՐ ՀԻԻԿՅՈ իւր այս աշխատութեամբը քննութեան տակ է որ մարդկային ցեղը, միջին դարու բռնաբարական շղթայներու առաջ կաշկանդող ճիզվիթական մեքենաները մերկապարան խայտառակած ու անջատած է :

21 Փետրվար Առաքնագար 1868

Ազնիւ Էրիզա

Հայ մանկտոյն յառաջադիմութեան նկատմամբ Ձեր ունեցած ճշմարիտ բաղձնաց քաջ տեղեակ լինելով, կատիպուիմք ահա հինգ ամսեայ դատապարտելի լուծեան մը կապը խզելով գրիչ ձեռք առնուլ . և ուրախ եմք որ այս առաջին անգամին բերկրառիթ լուրեր հաղորդելու երջանիկ բաղդը ունեցած եմք : Բերկրառիթ կսեմք . վասն զի եթէ Ազգօգուտ Հանդիսիդ միջոցաւ տեղւոյս ազգայիններն զովաբանուին՝ ալ աւելի պիտի կրկնապատկին իւրեանց Ազգաշէն գործերն . իսկ եթէ պարսառին՝ հրապարակական պարսաւանքէ մը ետեւ չեմք յուսար որ դարձեալ առիթ տան, զլուխը խելք՝ զգալուն սիրտ՝ և ձեռքը գրիչ ունեցողներուն գրիչ ձեռք պահել տալու . և որով՝ այլ ևս չկրնարով շարունակել իրենց վհատեցուցիչ գործերն պիտի չկարենան արգելք ըլլալ յառաջդիմութեան , որով՝ դարձեալ կըլլայ բերկրառիթ :

Սկսինք ուրեմն :

Ամսոյս 4ին քաղաքիս Ս . Նիկողայոսիանուամբ կառուցեալ դպրոցին աշակերտաց իննամսեայ հարգաբնութեան և պարգևաբաշխութեան Հանդէսը խիստ շքեղ փառաւոր՝ և հրապարակական եղանակաւ կատարուեցաւ Սրբոց Հրեշտակապետաց Հոյաշէն տաճարին մէջ , ուր բազմամիւ Ազգայիններ արդէն եկած ըլլալով՝ (եկեղեցականք և աշխար-

հականք) իրենց պատկառելի ներկայութեամբը Հանդէսին շքեղութիւնը կը կրկնապատկէին : Քննուած ուսմունքներն էին՝ լուսնի մասն Գերականութեան Կրօնագիտութիւն . Ազգային պատմութիւն . Ազգութեան յի պատմութիւն . Բարոյական դաստիարակութիւն . Մանր ուսմունք Գրիպտոնէական . Քաղաքավարութիւն , Բ . նօտր՝ և գեղագրութիւն . Թուաբանութիւն՝ իւր ամեն գործողութիւններովն . որոնց նկատմամբ աշակերտաց տուած քաջ պատասխաններն՝ Մեծապատիւ քննիչներն ու արժանապատիւ Հանդիսականներն գոհացնելով հետեւալ վկայագիրն ստորագրելով Արգոյ Հոգաբարձուաց տունին բսանէն աւելի ուսումնական և պատկառելի անձինք :

Ներկայ եղող մեծապատիւ ուսումնասիրաց և եռ հասարակ արանց և կանանց ծափահարութիւններն ու «կրկնութիւն կրկնութիւն» աջադակելին՝ Ազգային ընտիր ընտիր երգոց ներդաշնակութեամբ՝ զմայլելի Արմօնի մը սրտագրաւ ձայնին հեղ խառնուելով եկեղեցին և նորա զմբեթալարկ խորանները կը թնդացնէին : Սիրեցի է մեզ յիշե՛ որ ուսումնասէր Հանդիսականաց ցոյց տուած վառվռուն եռանդն ու փափաքը դեռափնիթ աշակերտներն իսկ գոգոնելով մէկն զմիւսը գերազանցելու կրնկրտէր . այնպէս որ Առաջին ցատու աշակերտներէն մին, Յովհաննէս Հայկ Ճօլօլեան , Ազգային վաղամեռիկ բանաստեղծի մը յառաջդիմութեան նկատմամբ զրած ոտանաւորը կարդացած ատեն՝ որն որ վարը պիտի տեսնէր . Ազգային սուրբ սիրով վառուած քանի մը քայլ յառաջ քայլեց խիստ վայելուչ շարժումներով . իբր թէ Չօյլներու վրայ յարձակէր . . . : Յիշատակութեան արժանի՝ էր Մեծապատիւ Խմբագիր, Առաջին կարգի աշակերտներէն Չաքարիա Չարեհ , Տաղճեանի ի դիմաց աշակերտաց կարդացած ճառը , որուն մէջ ուսման և գիտութեան նկատմամբ զովեստներ շուայելով աղաջանօք կը յորդորէր ամէն կարգի Ազգայիններն որ դպրոցներն մահու և կենաց խնդրոյ մը պէս նային : Մասնաւոր նշանակութեան և զովեստից արժանի էր նաև յիշեալ դպրոցի Հայկաբանութեան

դասանող Պատուելի Շահնազար Արամ Աստուածատուրեանցի ի դիմաց վարժապետաց խօսած ճառը, որ արդեն Ազգասիրութիւն եզական բառն իւր խօսքին նիւթ ըրած, խիստ գեղեցիկ և ազդու կերպիւ բացատրեց: Հանդէսն շքեղացնող առժրկաներէն մին ալ սա էր որ իւրաքանչիւր որ տաճարին դէնէն ներս մտնելուն պէս, ամենտիառաւոր կերպիւ կը տեսներ բարերաց գեղեցիկ կենդանագրերով զարդարեալ կամարի մը վրայ խոշոր տառերով դրօշմուած յառաջ Հայութիւն. յառաջ Ազգութիւն. մոզական բառերը. . . . Մէկ խօսքով՝ Ատաբազարի մէջ տեղի ունեցած քննութեանց և պարգևաբաշխութեան ամենէն շքեղն ու փառաւորն եղաւ: Հուսկ ուրեմն կը վերջացնէր խօսքերն իւր խորին շնորհակալիքը յայտնելով հրապարակին թէ սոյն դպրոցի Արդոյ Հոգաբարձուաց՝ թէ Պատուելի Վարժապետաց՝ թէ աշակերտելոց և թէ ասոնց ամենուն քաջալերիչ հանդիսացող ամէն կարգի մեծարդոյ Ազգայնոց. չմոռնամք նաև մեր զգացած գոհութեան և ուրախութեան նկատմամբ ունեցած շնորհակալութիւնն իսկ յայտնել առ պատուելի Ճանիկ վարժապետ թագուորեան, Նիկոմիդացի բուզմաշխատ կառավարչին և դասատուին որ իւր անխոնջ ջանքերը քիչ ժամանակի մէջ յուսացուած են աւելի արդիւնք ցուցնելով երջանիկ բաղդը ունեցաւ: Կրկնէնք ուրեմն փնտք ազգասիրաց որոնք յաջողակ պատասխանողներն յարգելու և պատուելու, և տկարներն ալ յորդորելու պարտքը չզրանալով ճշմարիտ Հայութեան տիպանքներ ըլլալիւ երջանկութիւնը կը վայելեն. ընդ հակառակին, անարգանք Ազգատեսններու . . . Ապրին այն ամեն դասատուներ որոնք՝ ստրկացեալ Ազգի մը ապագան իրենց առջև ունենալով, Հայութեան ապագայ բաղդը երջանկացնելի՜մ ամենափափուկ և նուիրական սուրբ պաշտօնը կը վարեն:

Հանդէսն աւարտելէ վերջը որ ամբողջ վեց ժամ տևեց, քաղաքիս Սուրբ Կարապետ եկեղեցւոյ քահանաներէն մին՝ արժանապատիւ. Տէր Յակոբ ուսումնական քահանայն՝ յատկապէս դպրոց զալով կէս ժամու չնի խրատական և քաջալերական յոր-

դիքներ ձեռնդէց առ աշակերտեալս դպրոցի: Թող կարմրին յիշեալ Արժանապատիւ. Հօր օրինակին չ'հետևողներն . . . :

Ազնիւ խմբագիր. ջերմ սիրոյ և անկեղծ բարեկամական ողջոյնս ձեզ նուիրելէ վերջը, սա ալ կը խնդրեմ որ, եթէ կը բարեհաճիք քննութեան առթիւ խօսուած Ազգասիրական ճառին ճիշդ պատճենը ձեզ ուղղելու, առ ի հրաշտարակութիւն և ի ծանօթութիւն համայն Ազգիս արամեան:

Բարեկալ
ՀՐԱԶԵԱՅ

Ատաբազարի Ս. Հրեշտակապետ Թաղի Ս. Նիկողայոսեան վարժարանին իննամսեայ հարցաքննութեան հանդիսին ներկայ ըլլալով, Հայկաբանութեան մէջ քերականութեան առաջին մասին. կրօնագիտութեան, Հոյնպէս Ազգային պատմութեան. Սրբազան պատմութեան. բարոյականի և քաղաքավարութեան նկատմամբ տրուած պատասխանները թէ ատենին կարճութեանը, և թէ տղայոց հասակին հետ բաղդատելով բաւական աղէկ ըլլալը առաջառ վկայելով կատորագրեմք:

Պատուաւոր Ազգայնոց
20ի ջափ ստորագրութիւն

Պալատէ տէրն օլունան էհէմմիյէթէ շայեան իբի մէքթուպլարըն մաալինէ պագարագ, Ատաբազարընտա վագը օլան սէվկիլիւ Միլլէթիմիդին Ս. Նիկողայոսեան մէքթէպին շակիրտանլարը, քէնտի Թահսիլ իմտիքլէրի իլիմլէր իլէ. տիւնէա իւզէրինտէ պուլունան հէր էրմէնի սըֆաթընը Թաշլյանլարը իֆթիսար իլէ միւշէրրիֆ իլլէմիշլէր, իմտի պիզ պուկիւն կերէք մէզբիւր մէքթէպտէ պուլունան միւտէրիս էֆէնտիլէրէ, վէ կերէք Թահսիլի իլմ իլէ միլլէթիմիդին կիւն պէ կիւն Թէգատտիւմիւնէ ճանը կէօնիւտէն չալըշան Թալիպէլէրէ. իսմիքեանէթ իլէ վանիպիմիդտէն ատտ օլունան Թէշէքբիւրլէրիմիդի տիրիդ իմմէյուպ, տայիմի էօմի սւ իզպալ իլէ ինշալլահ իլէրուտէ տախի միլլէթիմիդ իշինտէ շէրէֆտուտուր պուլունանագլարընա, էզ ճան ու տիլ

արգրե խորհրդով և հանդես կհանի օգուտը գաղափար
հանրեալութեանի. Թարափը մըզա կեօծնորոտիքէն
րինտէ Թէշէքիւրէն օտէրմինէ միւսարամ իլլէյե-
նիկիմիդի տախի ալէնէն իխմար իտէրիզ :

15 Մարտ 1868 Վ. Պօլիս

Աղեիւ Բարեկամ

Հայը՝ որչափ որ կուզէ Թող աշխատի իւր մտա-
ւորական հորիզոնը նսեմավառ ցոլացնելու . Հայը
որչափ որ կուզէ Թող տքնի իւր յառաջադիմութեան
առաջը կանգնող տգիտական բանական արդարու-
թեան սուր մը շողացնելու . այնչափ աքիւր աշ-
խատանքը իդերեւ պիտի եղնէ , վասն զի Հայը խա-
ւարային գաղափարներով իւր ազգասիրական ե-
ռանդը միշտ ոգեպաշտ ճգնելու կը ջանդգնի . . . կը
ցաւիմք երբ այսպիսի ցառամեալ Հայութիւն մը
կը նշմարենք , եթէ Հայուն արդարութիւնը խոստո-
ւանելը մարդկային իրաւունքնէ ըսելու ըլլաւ . իս-
կայն կեղնէ զրպարտութիւնը իրեն առաջնորդ բռնե-
լով չարագործութիւններ հիւսելու . Հայը փոխանակ
իւր արեւակից եղբայրը սիրելու պատուելու , տգի-
տական կուսակցին գրիչը ձեռք առած՝ զրպարտա-
կան գրութեամբ կամ լաւ եւ է ըսել . ստախոսու-
թեամբ նախանշող դիմակն երեսն անցուցած . Հի-
սանդանոց Փանոսեան եւ Խառն ժողով անուն տես-
րակի հեղինակութեամբ , անվախել և անհիմն զո-
ւանութիւններ կը յաւելու Մեծապատիւ . . Կարա-
պետ Էֆենտի Փանոսեանի անձի դէմ չ սակայն չեմք
դիտեք . Թէ ինչ ըսել կուզէ յիշեալ վատաբան , զոր
պարծախտ , դիմակաւոր և անկենդան տեսրակին
հեղինակը , իւր բոլոր իրաւապաշտ գրութեանքը
մեծադրելի վիճակ և ողորմելի գրիչ :

— Խմբագիր . կարծեմ ամէն մարդ ազատ է իւր
ազգային իրաւանց վրայ , իրաւամբ խօսելու և զը-
նելու . . . ուրեմն մէք ևս այսօր նպարտ կը համա-
րիմք յիշեալ անկենդան տեսրակի զոաբանիչ հե-
ղինակին հարցունելու Թէ՛ եթէ ինքը ճշմարտութիւնն
արդարութիւնը սիրող Հայ մ'է ապա ուրեմն
իւր անունը յիշեալ տեսրակին տակը ստորագ-
րու խոյս կուտայ , եթէ ինքը Փանոսեանէ աւելի

կա իւր ազգը կը սիրէ ու անոր ներկայ վիճակին վը-
րայ կը ցաւի . ուրեմն ինչու համար ճշմարտութիւ-
նը գետնի տակ Թաղելով . իւր վատաբանութիւնը
կը խոստովանի . սակայն քաջ Թող զիտնայ վատա-
բան և անկենդան տեսրակի դիմակաւոր Հեղինակը
որ , Ազգը՝ Ազգ է՝ և Փանոսեանն ալ նոյն ինքն Փա-
նոսեան . իսկ ինքը՝ վաչաբան զրպարտիչ և զոն-
բան . հասարակութիւնը քաջ կը ճանչնայ Փանոսեա-
նը նաեւ անկենդան տեսրակի վատաբան Հեղինա-
կը . . . հոգ չէ որչափ որ կուզէ Թող իւր անունը կեղծէ
անշուշտ կուզայ վայրկեան մը որ , յանկարծ իւր
կեղծ դիմակը արդարութեան սուրիչ հանդիպելով
կտոր կտոր կը բզբտուի , ու իսկոյն իւր կեղծ դի-
մակը գետին զորելով հրապարակաւ կը խայտա-
ռակուի :

Փանոսեանը ինչ օր կը գործէ ալոյսի ներքեւ կը
գործէ . իսկ անկենդան տեսրակի աբ ճիչ Հե-
ղինակը խաւարի և քուծի տակ կը ներ որ է :

Եթէ անկենդան տեսրակի բովանդակութիւնն
ըր չոր և անհիմն զրպարտութիւններ չեն . եթէ յիշ-
եալ վատաբանանձը ճշմարիտ Հայ է , Եթէ ինքը
հիւանդանոցի Թշուառաց վրայ խղճաբար կը գոչէ .
ուրեմն ինչու իւր անունը կը կեղծէ . եթէ աչ վատ
է իւր լեզուն . և սուտ է իւր գրչի ազգասիրութիւնը :

Խմբագիր անշուշտ իրաւունքէ հարցունել յիշ-
եալ անկենդան տեսրակի չարաբան հեղինակին Թէ՛
ժողովուրդ մը ինչ համարում կրնայ ունենալ իւր
գրչի վրայ . այն որ ազգասէր եմ ձեռնալով ստո-
րագրութիւնը կը կեղծէ . ու ընդհանուր Հասարա-
կութիւնը զոաբանութեամբ խաբելու կաշխատի :
Աշխատէ ուրեմն չար նախանձ և վատ Հայ . ու գո-
նէ անօթի ճգմուած փորդ կշտացնելու հաճար մէկ
բանի զոաբանական տեսրակներ ևս յօրինէ . աս-
դիէն անդիէն մուրացկաններու նման , ստակ հա-
ւաքէ . ու փաքրիկ գումար մը կուտածիդ պէս իսկոյն
երկու ոտքերդ ուղտի մը վրայ նետելով շուտով տը-
պարան վազէ . կեղծ ստորագրութեամբ հրապարա-
կել տուր . և 100 փարայի ծախելով հագիդ ստակը
ճարէ . Եթէ՛ յարգ մը գտնելով ամէն մարդ կարգա-
լու արժան բռն մը սեպէ , Միւստի մը նման ծիծաղէ :

Լեւոնա Չանտիկն արկը մօտենայ կարմրուկ հաւկիթին ծայրէն բռնելով զնա գինեպանին տակառին զլուխը անցիր, կեր ու խմէ . և դաշնակաւոր ձայնդ վերջացնելու ատեն երեք անգամ ալ, կեցցէ զուաքանութիւն . կեցցէ ստախօսութիւն, կեցցէ սուտ ազգասիրութիւն գոչելուիս . Թոնայից զաւածող զլուխիդ տընկէ . կակայիս քիչէ որ զլուխիդ շրջին եզարու չակած զրանդանիդ ամոռը և զուաքան զրչիդ ծայրը սովամահ կաղամարին քովը կանգուն քեզ կսպանէ . Բնապարէ դեռ զխուրդ մարմնիւնը ցրնորական կերպարանք մը չառած . Փանոսեանի դէմ յարձակելու . զրէ որ որչափ որ կուզես . զուաքանէ որչափ որ խելքդ զլուխդ է . սակայն Փանոսեանի անձին և Ազգային պատուոյն դէմ . կոկողաբանելու աստեղ . զինծումն մօին անկիւնները շրջագայէ . եղէ ոչ Փանոսեանն և իւր արբանեակներն զքեզ հոն գտնելով . խելոյն կը խայտառակեն հասարակութեան արդար ատենանի առաջ . և յիմարապետ պաղտասարին շղթային օղակները վիշտ անցուցած քեզ այն Հիւանդանոցը կուղղէն . ուր որ վայրկեան մը առաջ պնդր վիճակին վրայ կը ցաւակցէիր : Լսեցիր հիմա . Պ . Զուաքան , եմէ ոչ քուկին նոյ լուսանկարդ ճշդիւ նկարագրելով , հրապարակաւ խայտառակելով մասին երբեք դանդաղ չէ գրիչնիս . հասկըցար հիմա . Պ . վատաբան . ե-
թէ ոչ ականջներդ պատրաստ է . հշմարտութեան արդար որոտումները ես լսելու :

Խմբագիր ի սէր հշմարտութեան բարեհաճեցէք ներկայ նամակս ձերդ Ազգագրութեան Հանդիսի միջոցաւ հրապարակել . առ ի ազգայնագրութիւն ճամայն Ազգայնոց որք ստակին մեղքանալով . ոչինչ տեղը այնպիսի անկենդան տետրակի զուաքանիչ հեղինակին ալիք հշմարեն իրենց անտակները :

ՀԱՆԴԵՍ
ՔԱՐԵՆԻԱՆԻ

ՆՈՐ ՀՔԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՀԻՒԱՆԴԱՆՈՅ , ՓԱՆՈՍԵԱՆ

ԵՒ

ԽԱՌՆ ԺՈՎՈՂ

Այս անիւնով Արամեան տպագրութեամբ և անձանօթ դիմակաւոր Պարոնի . . . հեղինակութեամբ Մեծապատիւ Կարապետ Էփէնտի Փանոսեանի և նաև Արգոյ . Տօթոր Գալուստեանի անձի դէմ

հրատարակուած . խաղը և խայտառակ ու անհիմն զրպարտութիւններով լի , կարդալու անարժան և զգրելի , 70 երեսէ բաղկացեալ տետրակ մնէ որ , կը գտնուի բոլոր Հայագի զրատունները , զին 100 փարայ :

Առ այժմ մեր այսօր այսչափ ծանուցանել բաւականալով նաև արժան կը համարիմք իմացնել Մեծապատիւ ազգայնոց որ փոխանակ այսպիսի անիմաստ տետրակի մը համար 100 փարայ վճարելու . աւելի աղէկ է 90 փարայ վճարելով 3 օր Մանգումէ կարդալ և արեւցած 10 փարայով ալ սքանչելի սուրճ մը խմել . վասն զի քաջ համոզուած ենք որ սոյն անիմաստ տետրակին հեղինակը . . . աւելի նա իւր անձնական և նիւթական շահուն , քան Թէ Հիւանդանոցի պատսպարելոց օգտին համար զրել յանդրգնած է , իւր այս ծաղրելի հեղինակութիւնը :

ՅՈՎՀԱՆՆԱ ՏՄԱՐԳ

ԿԱՄ

ՕՐԼԷԱՆԻ ՕՐԻՈՐԴԸ

ՎԻՊԱՍՍԵԱԿԱՆ ՈՂԵՐԳՈՒԹԻՒՆ

ՇԻԼԼԵՐԻ

ՔԱՐԳՄԱՆԵԱՅ

ԿԱՐԱՊԵՏ Կ. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

Այս վերնագրով . Պ . Ռուբէն Քիւրճեանի մաքուր տպագրութեամբ ի լոյս բնծայուած 176 երեսէ բաղկացեալ արդի երիտասարդաց և օրիորդաց հետաքրքրութեամբ քանիցս անգամ կարդալու արժանի վիպասանական սքանչելի ողբերգութիւն մնէ . որուն մէջ բովանդակ և ակաները կը փայլի հուշակաւոր հեղինակին կենդանի եռանդն . ու մեր Արգոյ Թարգմանչին ազգասիրական ոգւոյն , և զրչին զովելի աշխատութիւնը :

Կը ծախուի Բերայ մեծ բողոց 323 . Ս . Հ . Վայսի զրատունը . նա մանաւանդ բոլոր Հայ գրարավանառաց խանութները զին . 7 ղուրուշ :

Խմբագիր-Տեղեկ

ԽԱՅԻԿ Թ. ԹԵՐԶԵԱՆ

Առաջին տր. բնական դպրոց

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

Կ. պոլիս, Ուղուն Զարեք Եփեմ փառա խան, քիւ 13